

Յ. Գ. ԻԱԳԻԿԻՅԱՆ, Ժամանակակից նայեցման դարձվածային միավորները, 2002 ԳԱ հրատարակչություն, Երևան, 1986, 354 էջ:

Դարձվածը շնայած առաջացել է շատ հին ժամանակներից, բայց նրա մասին ուսմունքը ակերտ է առել ավելի ուշ: Դարձվածաբանության վերաբերյալ շատ հարցեր լուծվել են օտար և ռուս լեզվաբանության մեջ: Հայերենի դարձվածաբանության ուսումնասիրության ընազավառում դեռևս կան բազմաթիվ լուծման կարոտ հարցեր: Եվ ահա այդ բացն է լրացնում բանասիրական գիտությունների թեկնածու Յ. Բադիկյանի սույն աշխատությունը: Այն նվիրված է ժամանակակից հայերենի դարձվածների իմաստային, քերականական դասակարգմանը և կառուցվածքային վերլուծությանը: Աշխատությունը բաղկացած է երեք բաժիններից (ներածություն, անվտանգական դարձվածային միավորներ և հաղորդակցական դարձվածային միավորներ), որոնք իրենց հերթին բաժանվում են գլուխների:

Հեղինակը, հետևելով դարձվածաբանության ուսումնասիրության ընազավառում ժամանակակից օտար և ռուս լեզվաբանության ձեռք բերած նվաճումներին, նախ ճշտում է տերմինի հարցը. դարձվածը կամ դարձվածաբանական միավոր տերմինների փոխարեն ընդունում է դարձվածային միավոր տերմինը: Ուշադրություն է արժանի նաև այն հանգամանքը, որ Յ. Բադիկյանը սահմանադատում է բուն դարձվածները ոչ դարձվածային միավորներից: Նա ցույց է տալիս դրանց շփման եղբերը և կատարում ժամանակակից հայերենի դարձվածային միավորների (այսուհետև՝ ԴՄ) բառաձևատային, ձևաբանական ու շարահյուսական դասակարգում՝ յուրաքանչյուր տեսակի քննության ժամանակ անդրադառնալով ԴՄ-ների քերականական կարգերին:

Ըոտ իրենց իմաստային և շարահյուսական գործառնությունների՝ հեղինակը ԴՄ-ները բաժանում է երկու տեսակի՝ անվանադական և նազորակցական, որոնցից առաջինը հարաբերակից է համարում բառերին (գոյականներին, ածականներին, մակբայներին և վերաբերականներին), իսկ երկրորդը՝ նախադասություններին: Ըշտում է դարձվածաբանության տեղը լեզվաբանության բաժիններին՝ սահմանադրում. այն համարում է շարահյուսական մակարդակին վերաբերող գիտաճյուղ՝ «Ենթակում այն հանգամանքից, որ դարձվածային միավորը առնվազն երկրադարիչ, կալում, վերաձևատայնորված բառակապակցություն է, և նրա բաղադրիչների միջև, թեև քաղցած, գոյություն ունեն համաձայնություն, խնդրառություն և շարահասություն, ինչպես նաև այն, որ ԴՄ-ները օժաված են ներունակ կամ առկա ստորոգման հատկանիշներով» (էջ 11):

Աշխատությունը կատարված է համաժամանակյա կտրվածքով, թեև, հարկ եղած դեպքում, հեղինակը դիմում է նաև միջին հայերենի և գրարարի փաստերին: Դարձվածները քննվում են ըստ ձևային և իմաստային հարաբերությունների, այսինքն՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների: Աշխատանքը գրելիս հեղինակը ելակետ է ունեցել լեզվական երկու տիպի միավորներին էլ, այսինքն՝ շարակարգային և հարացուցային հարաբերությունների դրսևորումը ԴՄ-ներում: Յ. Բադիկյանն օգտագործել է փաստական հարուստ նյութ, որը քաղել է ոչ միայն բառարաններից ու լեզվի ինստիտուտի քարտարանից, այլև բազմաբնույթ ու բազմապիսի դրականությունից: Որպեսզի ճշգրտորեն որոշի դարձվածների տեղը լեզվում, Բադիկյանը նախ քննում է դրանց հիմնական հատկանիշները, ապա, հետևելով ռուս և հայ լեզվաբանության մեջ տարածում գտած դարձվածների իմաստային և բաղադրիչների ձուլվածություն աստիճանի դասակարգմանը, արդի հայերենի համար ընդունում է դարձվածների չորս տիպ՝ դարձվածային սերտաճում (կարապի երգ, գլուխը կորցնել և այլն), դարձվածային միասնություն (կրակի դին, խելքի տուպուակ և այլն), դարձվածային կապակցություն (գլուխը կախել, սիրտը ցավել և այլն) և դարձվածային արտահայտություն (էլեկտրական հոսանք, բարձրագույն ուսումնական հաստատություն և այլն): Ծույց է տալիս, որ վերջին տեսակը ոչ մի կապ չունի իսկական դարձվածի բուն էություն հետ, իսկ դարձվածային կապակցության բաղադրիչների կապը ավելի թույլ է և հեշտությամբ տարալուծելի: Նշվում են դարձվածային միավորի և բառակապակցության միջև եղած մի քանի առանձնահատկություններ. ինչպես՝ ա) դարձվածն ունի փոխարեքական իմաստ, իսկ բառակապակցությունը՝ ուղղակի, բ) դարձվածի բաղադրիչները կորցրել են իրենց անկախ իմաստային արժեքը (օրինակ՝ գլուխ տանել), իսկ բառակապակցության բաղադրիչները չեն կորցրել

(օրինակ՝ էլեկտրական դաշտ)։ Դարձվածները սահմանազատվում են հարադրություններից, հարադրության բաղադրիչները պահպանել են իրենց բառական իմաստը, իսկ դարձվածներում՝ վերախմաստավորվել։ Դարձվածները թևավոր խոսքերից տարբերվում են նրանով, որ վերջիններս ունեն հեղինակային ծագում։ Հեղինակը առածները համարում է ԴՄ-ներ, իսկ ասացվածքները՝ ոչ, որովհետև դրանց իմաստն արտահայտվում է ուղղակիորեն (օրինակ՝ «Փանի լեզու գիտես»՝ այնքան մարդ ես)։ Որոշակի պատճառաբանությամբ նա ԴՄ-ներ չի համարում նաև անձքներն ու օրհնանքները։

Խ. Բաղիկյանը, մեր կարծիքով, տալիս է դարձվածների ճիշտ սահմանում. «Նրկու կամ ավելի բառերից կազմված պատկերավոր զգալիոր կամ ճասկացություն արտահայտող վերախմաստավորված և վերաբաղվող կայուն բառակապակցությունը կոչվում է դարձված կամ դարձվածային միավոր» (էջ 89)։

Աշխատության երկրորդ, ամենածավալուն բաժնում մեկ առ մեկ քննվում են գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող ԴՄ-ները՝ ըստ դրանց կառուցվածքային տիպերի (ստորադասական, համադասական և համաստորադասական) և կաղապարների (երկանդամ, եռանդամ, քառանդամ, հնգանդամ)։ Ճիշտ է վարվում հեղինակը, երբ ամեն մի կաղապար ներկայացնում է նաև գծապատկերով։ Բոլոր դեպքերում քերականական այս կամ այն իրողությունը հաստատվում է բնորոշ ու տիպիկ օրինակներով։ Իրավացիորեն եզրակացվում է, որ ինչ պաշտոն կատարում է տվյալ խոսքի մասը, այդ նույն պաշտոնն է կատարում նաև դրանով կազմված ԴՄ-ը։

Դրքի երրորդ բաժինը նվիրված է հաղորդակցական դարձվածային միավորների քննությանը։ Նշելով, որ դարձվածային նախադասությունները իրենց հիմնական հատկանիշներով (ստորոգմամբ, հնչերանգով և մտքի ավարտվածությամբ) նման լինելով սովորական նախադասություններին, նաև տարբերվում են, հեղինակը խոսում է այդ տարբերությունների մասին։

Հաղորդակցական դարձվածային միավորները բաժանվում են կառուցվածքային հետևյալ տիպերի՝ ա) պարզ և բարդ, բ) միակազմ և երկկազմ, գ) լրիվ և թերի, դ) շաղկապավոր և անշաղկապ։ Քննելով դրանցից յուրաքանչյուրի տեսակը և նշելով համապատասխան կաղապարները՝ Բաղիկյանը իրավացիորեն եզրակացնում է, որ դարձվածային նախադասությունները ծավալուն չեն, այլ սեղմ ու կարճ են։ Այդ օրինաչափությունը գործում է նաև դարձվածային բարդ նախադասությունների ժամանակ, դրանք սովորաբար երկբաղադրիչ են լինում։ Օրինակ՝ «Քիթը բռնեմ՝ հոգին կտամ», «Արտին դանակ զարկես, արյուն չի գա» և այլն։

Աշխատությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով։ Յուրաքանչյուր հարցի քննության ժամանակ երևում է հեղինակի գիտական բարեխղճությունը. նա հիշատակում է ամեն մի լեզվաբանի թեկուզ և փոքր աշխատանքը դարձվածաբանության բնագավառում։ Այնուամենայնիվ, աշխատանքը դեռ չէ նաև թերություններից։ Կան անհարկի կրկնություններ, օրինակ, դարձվածաբանության տեսական մասն ու եզրակացությունները կան առաջաբանում, առանձին հարցերի քննության ժամանակ և ընդհանուր եզրակացություններում։

Երբեմն ճիշտ չեն ներկայացվում նախադասության անդամների պաշտոնները, օրինակ, 127-րդ էջում բերված անշատման անուղղակի խնդիրները (օրինակ, «Հետաքրքիր է, թե ինչու ես ամառում այդ մածոնի աման լպտտոգից։ Դառա՞ն մոբբի ճագած գայլերից այնքան էլ չպետք է վախենալ» և այլն) համարված է ներգործող խնդիր, համեմատության խնդիրը («Գետի երեսին ընկած տաշեղի նման հույսը կորցրել էր»)՝ ձևի պարագա։ Հանդիպում ենք ոչ ճիշտ շարադասությամբ կամ ոչ ճիշտ բայաձևով ներկայացված դարձվածային միավորների. օրինակ՝ «Մեկի ջրաղացին ջուր լցնել» (էջ 24), «Իսխանակ՝ ջուր լցնել մեկի ջրաղացին»։ «Շունը ձեռքից հաց շտոնել» (էջ 198), «Իսխանակ՝ ջուրը ձեռքից հաց չի առնի»։ Գործածում է օտար տերմիններ, ինչպես, օրինակ, բլոկ (էջ 45), պոտենցիալ (էջ 62), ամառիկ (էջ 130), սուպլետիվիզմ (էջ 231), պասսիվ (էջ 234)։ Հանդիպում ենք սխալ թարգմանությունների (էջ 74)։

226-րդ էջում կարդում ենք՝ «...լալ, երգել, թռչել բայերը սովորական իմաստներով ու կիրառություններով անանցողական են, չեզոք սեռի, բայց ԴՄ-ի բաղադրիչ դառնալիս կարող են անցողական դառնալ և դարձվածի ներսում ունենալ իրենց խնդիրը», այնինչ դրանցից միայն թռչել-ն է չեզոք սեռի բայ, իսկ երգել-ը՝ ներգործական, լալ-ը՝ կրկնասեռ (ներգործական և չեզոք)։ Անհամոզիչ է նաև նրա հետևյալ տեսակետը. «Ժամանակակից հայերենում քիչ չեն և անպիսի բայական ԴՄ-ները, որոնցում պատճառանիշ 3-ն իմաստադատիչ դեր չի խաղում, այսինքն՝ անանցողական-անցողական հակադրությունը վերանում է» (էջ 230), և բերում է «Աչքի լույսը սպիտակել և սպիտակեցնել, աչքերը քոռանալ և քոռացնել, խելը թռչել և խելքը թռցնել, մեջքը պնդանալ և մեջքը պնդացնել» գուցադիր օրինակները և գրում, որ դրանք նույն

րանն են նշանակում: Մեր կարծիքով, երկրորդ նախադասություններում առկա է պատճառականության իմաստը: Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ գոյական բաղադրիչը առաջին նախադասություններում ենթակա է, իսկ երկրորդ նախադասություններում՝ ուղիղ խնդրո:

Երբ խոսվում է բայական և մակբայական ԴՄ-ների շարահյուսական կիրառությունների մասին (լՂ 256—259), բերվում են նաև դերբայական դարձվածներով բաղմամբով նախադասություններ (օրինակ՝ «Գանձապանի պոչը սառույցին կապելու փորձեր էին անում: Ուրիշի ձեռքով կրակից շագանակներ նանելով շատ հեռու շես գնաց և այլն»), բայց ոչ մի հիշատակություն չկա դերբայական դարձվածի մասին առհասարակ:

Երբեմն հանդիպում ենք ոճական անհարթությունների ու վրիպակների (տե՛ս, օրինակ, լՂ 299, 302): Հեղինակը շատ է շարաշահում հանդես գալ (օրինակ, միայն 258-րդ էջում՝ 6 անգամ), հետաքրքիր է, հետաքրքրական է բառակապակցությունները:

Վերահիշյալ դիտողությունները, սակայն, հիմնականում մասնակի բնույթ ունեն:

Ամփոփելով ասենք, որ Խ. Բաղդկյանը, համակողմանիորեն քննելով արդի հայերենի դարձվածները, իր կարևոր ավանդն է բերում ժամանակակից հայերենի դարձվածաբանության ուսումնասիրության բնագավառում:

ԳԵՎՈՐԳ ՔՈՍՈՒՆՅԱՆ

բանասիրական գիտությունների քննաժառանգ